1.6. Մեծությունների համեմատումը

Երեխայի հետ զբաղվողին

1. Սարգիսը 8 սունկ հավաքեց, իսկ Անին՝ 10 սունկ: Անին Սարգիսից քանի՞ սունկով ավելի հավաքեց:

Սարգիսը քանի՞ սունկ հավաքեց: Իսկ Անի՞ն: Ո՞վ էր ավելի շատ հավաքել: Ճիշտ է, Անին, որովհետև 10-ը 8-ից շատ է: Իսկ 10 սունկը 8-ից քանիսո՞վ է ավելի: Այսինքն՝ 8-ին ի՞նչ ավելացնենք, որ 10 դառնա: Սարգիսը, բացի իր հավաքած 8 սունկից, էլի 2 սունկ պիտի գտներ, որ Անիի չափ՝ 10 սունկ հավաքած լիներ: Քանի որ 8 + 2 = 10:

Կամ այսպես մտածենք.

Սարգիսի սունկերը



Անիի սունկերը

Մի քանի սունկ իրենց զույգը չունեն: Դրանք քանի՞սն են: Ճիշտ է, **2**-ը:

Տես, 10-ից հանեցինք զույգ ունեցող սունկերի թիվը, ստացանք ավելիների թիվը: 10 – 8 = 2: Այդքանով 10-ը 8-ից ավելի է:

2. Արկղում 33 կգ միրգ կա, իսկ զամբյուղում՝ 18 կգ: Արկղում զամբյուղից քանի՞ կիլոգրամով ավելի միրգ կա:

Արկղո՞ւմ ավելի շատ միրգ կա, թե՞ զամբյուղում: Համաձայն եմ՝ արկղում, որովհետև 33-ը 18-ից մեծ է: Եկ պարզենք՝ արկղում ինչքանո՛վ ավելի միրգ կա: Այսինքն՝ 33-ը 18-ից ինչքանո՞վ է ավելի: Այլ կերպ՝ 18-ին ի՞նչ ավելացնենք, որ 33 ստանանք: 18-ին 2 ավելացնենք, 20 կդառնա ու էլի 10 և 3 պիտի ավելացնենք՝ գումարենք, որ 33 դառնա: Այսինքն 18-ին պետք է 2 + 10 + 3 = 15 ավելացնենք, որ 33 դառնա: Այսինքն 33-ը 18-ից **15-ով է ավելի**: (33 -18 = 15):

Հուշում

Որպեսզի երեխան հար-հար հաղվելուց կամաց-կամաց գործողությունն անմիջապես կատարելուն անցնի, խնդիրը լուծելուց հետո, վերջում միշտ նշեք արված գործողությունը: Օրինակ՝ տվյալ դեպքում՝ 33-ից հանած 18 15 է:

Արի խնդիր լուծենք

1.

Նկարին նայելով հաշվիր՝ ջրահարսին քանի՛ դելֆինով ավելի են ծառայում, քան ծովահրեշին։

Պատասխանը՝ 4-ով ավելի։

2.

Նկարին նայելով հաշվիր՝ Բաբա-Յագան քանի՛ սնդուկով ավելի ունի։

Պատասխանը՝ 3-ով ավելի։

3.

Նկարին նայելով հաշվիր՝ աղջիկները տղաներից քանիսո՛վ են քիչ:

Պատասխանը՝ 4-ով:

4. Մի ծաղկամանում 11 վարդ կա, մյուսում՝ 5 մեխակ: Վարդերը մեխակներից քանիսո՞վ են ավելի:

Հուշում

Խնդիրը կարող ես նկարել ու համեմատել: Կարող ես հատ-հատ համեմատել՝ 1 մեխակ-1 վարդ, 2 մեխակ-2 վարդ ու այդպես շարունակ:

Պատասխանը՝ 6-ով բոլոր տողերն:

Զգաստ նավարկություն

(Եթե դժվարանաս խնդիրները լուծելիս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստա՛տ կլուծես:)

1. Տոնածառի մոտ Նապաստակը 2 բենգալյան կրակ վառեց, իսկ Արջուկը՝ 3: Նապաստակը քանիսո՞վ պակաս վառեց:
2. Վիննի-Թուխը 9 բանկա մեղր ունի, իսկ Դնչիկը՝ 4: Վիննի-Թուխը Դնչիկից քանի՞ բանկայով ավելի մեղր ունի:
3. Չար կախարդի բերանում 4 ատամ է մնացել, իսկ Անտառի ոգու բերանում՝ 10 ատամ: Անտառի ոգին Չար կախարդից քանի՞ ատամ ավելի ունի:
4. Շենքի բարձրությունը 16 մ է, իսկ կրպակինը՝ 4 մ: Կրպակը շենքից քանի՞